

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ  
ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

- 1.1 <<Կրթության մասին >> օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի և <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) կանոնադրության 71-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ համալսարանում իրականացվում է վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:
- 1.2 Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության համապատասխան որոշումով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման վարձի չափը սահմանում է տվյալ ուսումնական հաստատությունում:
- 1.3 Համաձայն <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի բուհի ուսանողի հետ կնքվում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բուհի ընդունելության հայտարարության հետ և որում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը, տվյալ բուհում բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման առաջին կուրսի վարձի:
- 1.4 Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանման

չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ ուսանողը հեռացվում է համալսարանից կամ ազատվում է և նրա հետ կնքված պայմանագիրը լուծվում է: Մահմանված կարգով այդ ուսանողների իրավունքների վերականգնման դեպքում նրանց հետ կնքվում է նոր պայմանագիր և ուսման վարձի չափի հարցը լուծվում է ընդհանուր հիմունքներով:

- 1.5 <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 9<sup>1</sup> կետի հիման վրա, ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի №581-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ձևով պայմանագիր է կնքվում համալսարանում վճարովի հիմունքներով ասպիրանտի և հայցորդի կարգավիճակ ունեցող անձանց հետ, որում նշվում են նրանց ուսման վարձի չափը՝ ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:
- 1.6 Մահմանված կարգով և ժամկետներում ուսման վարձ չվճարած անձինք հեռացվում են համալսարանից:
- 1.7 Տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված վարձավճարը ուսանողը մուծում է համալսարանի դրամարկղ՝ ուսանողի հետ կնքված պայմանագրում նշված չափով և ժամկետում:
- 1.8 Ուսման վարձավճարը կարող է նաև փոխանցվել (մուծվել) իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից:
- 1.9 Առկա կամ հեռակա ուսուցման համակարգերից հեռացված կամ ազատված ուսանողին նախորդ տարիների համար վճարած ուսման վարձավճարը հետ չի վերադարձվում:
- 1.10 Առկա կամ հեռակա ուսուցման համակարգերում վերականգնված ուսանողը տվյալ կուրսի ուսման վարձավճարը մուծում է ամբողջությամբ, որի ժամանակ հաշվի չի առնվում մինչև ուսանողի վերականգնումը, նախորդ տարիներին տվյալ կուրսի համար վճարած ուսման վարձը:
- 1.11 Տարբեր պատճառներով համալսարանից հեռացված (ազատված) ուսանողների վերականգնման ժամանակ նրանց ուսման վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափով և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր: Բացառություն են կազմում ժամկետային զինծառայության գորակոչված և առողջական վիճակի պատճառներով տարեկետում ձևակերպած ե

տարեկետումից վերադարձած ուսանողները, ովքեր ուսումը շարունակելիս մուծում են նախկինում սահմանված վարձավճարի չափը:

**1.12** Առկա ուսուցման համակարգի գորակոչված և զինծառայությունն ավարտելուց հետո հեռակա ուսուցման համակարգ տեղափոխված ուսանողը ուսման վարձ է վճարում հեռակա ուսուցման տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափը:

- ✓ Եթե ուսանողը առկա համակարգում մինչ գորակոչվելը տվյալ կուրսի համար կատարել է վարձավճարի մուծում, հեռակա համակարգում, մուծված այդ գումարի չափը հաշվի է առնվում:
- ✓ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված ցուցակների համաձայն Հայաստանի ազգային ազրարային համալսարանի առաջին կուրս ընդունվող վճարովի համակարգի արական սեռի այն անձինք , ովքեր կցագրվել են ըստ մասնագիտությունների (սկսած 2012 թվականի ընդունելությունից) և վճարել են իրենց ընդունելության տարում սահմանված վարձավճարի առնվազն 50%-ը և մինչև տվյալ տարվա սեպտեմբերը գորակոչվել են պարտադիր զինվորական ծառայության, նրանց համար ձևակերպվում է հրաման, որպես տվյալ մասնագիտության առաջին կուրսի ուսանող և համապատասխան զինկոմիսարիատի տեղեկանքի համաձայն ձևակերպվում է ակադեմիական արձակուրդ ծառայության ողջ ժամկետի համար: Նշված ուսանողները պարտադիր զինվորական ծառայության ավարտից հետո ներկայացնում են զինվորական կոմիսարիատի փաստաթուղթը և ձևակերպվում են, որպես ակադեմիական արձակուրդից վերադարձած: Նրանց համար վարձավճարը սահմանվում է ընդունելության տարում սահմանված վարձավճարի չափը, որը փոփոխման ենթակա չէ ամբողջ ուսումնառության շրջանում:
- ✓ Ըստ մասնագիտությունների առաջին կուրսի վճարովի համակարգում կցագրված այն անձինք, ովքեր գորակոչվել են ՀՀ զինված ուժեր, սակայն մինչև գորակոչվելը չեն վճարել վարձավճարի մի մասը, գորացրվելուց հետո նրանց վարձավճարը սահմանվում է գորացրման տարում տվյալ մասնագիտության համար սահմանված վարձավճարը:
- ✓ Առկա վճարովի ուսուցման համակարգի արական սեռի այն անձինք, ովքեր կցագրվել են ըստ մասնագիտությունների, վճարել են ընդունելության տարում

վարձավճարի առնվազն 50%-ը, մինչև ուսումնական պարապմունքների սկիզբը գորակոչվել են պարտադիր զինվորական ծառայության և զինվորական ծառայությունից հետո դիմում են հեռակա ուսուցման համակարգ տեղափոխվելու համար, նրանց վարձավճարը հեռակա համակարգում սահմանվում է հեռակա համակարգ տեղափոխվելու ուս.տարում հեռակա համակարգի տվյալ կուրսի համար սահմանված վարձավճարի չափը: Եթե տեղափոխման ժամանակ այդ վարձավճարի չափը ավելի բարձր է, քան առկա համակարգ ընդունված տարվա համար սահմանված վարձավճարը, ապա ուսանողի համար հեռակա համակարգում սահմանվում է գորակոչման տարում տվյալ մասնագիտության առկա համակարգի համար սահմանված վարձավճարը:

**1.13** Զին.ծառայության գորակոչվելու պատճառով տարկետում ձևակերպված և տարեկետումից վերադարձած ուսանողները պարտավոր են գորացրվելու մասին համապատասխան փաստաթղթում նշված օրվանից մեկ ամսվա ընթացքում դիմում ներկայացնել համալսարան՝ ուսումը շարունակելու համար:

**1.14** Առողջական վիճակի պատճառով տարեկետում ձևակերպված ուսանողները պարտավոր են նշված արձակուրդի ժամկետը լրանալուց հետո 10-օրվա ընթացքում դիմում ներկայացնել համալսարան ուսումը շարունակելու մասին:

**1.15** Նշված ժամկետներում չներկայացած ուսանողները հեռացվում են համալսարանից, իսկ նրանց վերականգնելու դեպքում ուսման վճարի հարցը լուծվում է սույն կանոնակարգի 1.10 և 1.11 կետի 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով:

**1.16** Եթե ուսանողը մինչև զինծառայության գորակոչվելը կամ առողջական վիճակի պատճառով չի կատարել նախորդ ուսումնական տարվա ծրագիրը, ապա ձևակերպվում է կուրսի կրկնում՝ նոր ուսումնական տարվա համար սահմանված վարձավճարի չափով և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր:

**1.17** Ուսանողը վճարովի սկզբունքով կարող է թողնվել նույն կուրսում կրկնակի ուսուցման համար հետևյալ դեպքերում.

ա) առողջական վիճակի պատճառով, եթե տարկետման ենթակա չէ,

բ) ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքում,

**1.18** Առաջին անգամ կուրսի կրկնում

**1.18.1** Եթե վարձավճարը մուծված է և ուսանողը կուրսը կրկնում է ծրագիրը չկատարելու պատճառով, ապա մուծում է նոր կուրսի համար սահմանված վարձավճարի 30% -ը:

**1.18.2** Եթե ուսանողն ունի վարձավճարի պարտք կամ վարձավճարը ամբողջությամբ չի մուծել, ապա մուծում է պարտքը նախկին կուրսից և մուծում է նոր կուրսի վարձավճարի 30% -ը:

**1.18.3** Եթե նոր կուրսում վարձավճարը փոխվել է, կնքվում է նոր պայմանագիր, որում նշվում է կրկնվող կուրսի վարձավճարի 30% -ը և հաջորդ կուրսի վարձավճարի չափը:

**1.19** Երկրորդ անգամ կուրսի կրկնման դեպքում

**1.19.1** Եթե ուսանողը վարձավճարի նախկին պարտքեր չունի (այսինքն վճարված է ուսման վարձը և առաջին անգամ սահմանված կուրսի կրկնման համար ուս.վարձի 30% -ը ), ապա վճարում է միայն նոր կուրսի համար սահմանված ուսման վարձի 30% -ը:

**1.19.2** Եթե ուսանողն ունի վարձավճարի պարտքեր նախկին կուրսից, ապա վճարում է նախկին բոլոր պարտքերը (այդ թվում վարձավճարի 30% -ը ), ինչպես նաև նոր կուրսի համար սահմանված ուսման վարձի 30% -ը և կնքվում նոր պայմանագիր:

**1.20** Եթե ուսանողը ուսումնական տարվա սկզբից ցերեկային ուսուցման համակարգից տեղափոխվում է հեռակա ուսուցման համակարգ կամ ընդհակառակը, ապա մուծում է փոխադրված համակարգի համար սահմանված տարեկան ուսումնական վարձավճարը: Եթե ուսանողի տեղափոխությունը կատարվում է երկրորդ կիսամյակից, ապա նա մուծում է նախորդ համակարգի համար սահմանված վարձավճարի 50%-ը և փոխադրված համակարգում սահմանված վարձավճարի 50%:

**1.21** Ցերեկային համակարգի պետական պատվերով (անվճար) սովորող ուսանողը հեռակա ուսուցման համակարգ տեղափոխվելու դեպքում ուսումը շարունակում է վճարովի հիմունքներով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հեռակա ուսուցման համակարգը միայն վճարովի է:

**1.22** Ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողները քննաշրջանին թույլատրվում են սահմանված գումարը մուծելուց հետո:

**1.23** Տեսական կուրսն ամբողջությամբ ավարտած, բայց պետական քննությունները (քննություն) չհանձնված և դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանված ուսանողին իրավունք է վերապահվում երեք տարվա ընթացքում, ռեկտորի թույլտվությամբ, հանձնելու պետական քննությունները (քննությունը) և պաշտպանելու դիպլոմային նախագիծը (աշխատանք)՝ ներքոհիշյալ ենթակետերում սահմանված վճարումները կատարելուց հետո:

ա) տեսական կուրսն ավարտած, բայց պետական քննությունները չհանձնած և դիպլոմային աշխատանք (նախագիծը) չկատարած ուսանողի համար սահմանվում է վճար՝ տվյալ ընթացիկ ուսումնական տարվա ավարտական կուրսի ուսման վարձի 25%-ի չափով:

բ) Տեսական կուրսն ավարտած, մեկ պետական քննություն հանձնած, բայց դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանված ուսանողի համար սահմանվում է վճար՝ 11.400 դրամի չափով:

գ) Տեսական կուրսն ավարտած, բայց երկու պետական քննություն չհանձնած, ուսանողի համար սահմանվում է վճար՝ յուրաքանչյուր քննության համար 7.100 դրամի չափով:

**2.** Ուսման վարձավճարը հաջորդ ուսումնական տարիներին կարող է փոխվել (ինդեքսավորել) մինչև 20%-ի չափով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար:

**3.** Ուժը կորցրած ճանաչել ՀՊԱՀ գիտ.խորհրդի 29.12.2008 թ. որոշմամբ և 14.11.2003թ. որոշմամբ (արձանագրություն №2) հաստատված «Հեռակա ուսուցման դեպարտամենտի կառուցվածքը և աշխատակարգը >> կանոնակարգի 1.7, 1.13 և 1.14 կետերը: